

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը հանդիպում է ունեցել Արագածոտնի մարզի առողջապահության համակարգի պատասխանատուների հետ

06.11.2018

Այսօր ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանը հանդիպում է ունեցել մարզպետարանի և համայնքային ենթակայությամբ գործող, պետպատվեր իրականացնող մասնավոր բժշկական կազմակերպությունների տնօրենների և բժշկական կենտրոնների պոլիկլինիկական ծառայություններ իրականացնող պատասխանատուների հետ:

Խորհրդակցության ընթացքում ներկայացվել են առողջապահության ոլորտի զարգացմանն առնչվող հարցեր, առկա հիմնախնդիրները և դրանց լուծման հեռանկարները:

Քննարկվել են նաև բուժօգնությունում ոչ արդյունավետ կառավարման հետևանքների, մատուցվող ծառայությունների որակի, մասնագետների որակավորման, շտապօգնության մեքենաների տեխնիկական վիճակի և հիվանդանոցին հատկացված գույքը նպատակային նշանակության համապատասխան օգտագործման հետ կապված հարցեր:

Մարզպետը բժշկական հաստատությունների տնօրեններին հանձնարարել է ձեռնարկել համապատասխան գործուն միջոցներ չարաշահումները և կոռուպցիոն ռիսկերը բացառելու ուղղությամբ: